ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<<ՀՀ ԿԳՄՍՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով

Անցկացման վայրը՝ ՄԱՐՏՈՒՆԻ

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Սիրուն Պողոսյան

Դպրոց՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի կրթահամալիր

Մարտունի *2022*թ.

Բովանդակություն

1.Ներածություն 3

2. Գրական ակնարկ 5

3. Փորձարարական հետազոտություն 8

3.1-Խմբի նկարագիրը 8

3.2-Փորձարարական դասեր 8

3.2.1-Փորձարարական դաս-*1* 8

3.2.2-Փորձարարական դաս-*2* 9

4. Եզրակացություն 10

5. Օգտագործած գրականության ցանկ 11

6. Հավելված 12

Դասապլան-1 12

Դասապլան-2 16

1.Ներածություն

Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով՝ հումանիտար առարկաների դասավանդման գործում կարող է բավականին արդյունավետ լինել թե՛ սովորողների և թե՛ ուսուցիչների համար, այս առումով բացառություն չէ նաև Հայոց պատմություն առարկան:
Հայոց պատմություն առարկան տալիս է հայեցի մտածելու կարողություն, դաստիարակում է հայրենաիրությամբ: Հայոց պատմության իմացության միջոցով է հիմնականում ձևավորվում հայի ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, ավելի շատ նրա միջոցով է աճող սերունդը հաղորդակցվում իր ժողովրդի անցյալին, պատմամշակութային ժառանգությանը: Միաժամանակ, սեփական պատմության իմացությունը հնարավորություն է տալիս իրականացնելու ազգային նպատակները, պահպանելու և ապահովելու հայի, որպես տեսակի, շարունակականությունը:

Հայոց պատմություն դասավանդման գլխավոր նպատակը
·Պատմական գիտելիքներով զինված, ազգային ինքնագիտակցությամբ օժտված, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող, ազգային նկարագիր ունեցող հայ մարդու և քաղաքացու ձևավորումն է:

Առարկայի դասավանդման գլխավոր խնդիրներն են
· Սովորողին հաղորդակից դարձնել նախորդ սերունդների ստեղծած հոգևոր մշակութային արժեքներին:
· Ցույց տալ Հայաստանի և հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության տեղը և դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ:
· Ծանոթանալ և իմանալ սեփական ակունքները, ժողովրդի պատմական ընթացքը ժամանակի հոլովույթում
· Օգնել հասկանալու պատմական իրադարձությունները, վերլուծել երևույթները:
· Ցույց տալ սերունդների կապը պատմության մեջ, ինչը կնպաստի պատմական ժառանգականության ընկալմանը և պատմական փորձի յուրացմանը ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցմանը:

Հայոց պատմություն առարկայի առաջարկվող գործունեության ձևերն են.

·Սովորողների մոտ վերլուծական և տրամաբանական մտածողության զարգացումը

· Ինքնուրույն հետազոտության վրա հիմնված ուսումնառություն

·Համաշխարհային պատմության կարևորագույն և հայության հետ առնչվող առանցքային դեպքերը ներկայացնել սահուն կերպով՝ շաղախելով դրանք ընդհանուր համատեքստում:

2. Գրական ակնարկ

Միջազգային փորձը վկայում է, որ մասնագիտական զարգացման ազդեցիկ միջոց է դպրոցի ներսում ուսուցիչների համագործակցությունը: Այս մոտեցման դեպքում ստեղծվում են ուսուցչական խմբեր, որոնք համատեղ մշակում են դասի պլաններ, վարում և դիտարկում են դասեր, ապա կատարում դասերի վերլուծություններ: Ուսուցիչները պետք է ձգտեն միմյանց հետ ակտիվ համագործակցության, փոխադարձաբար հարգեն և օգնեն իրար, կարևորեն միմյանց և ուսումնական հաստատության շահը: Ուսուցիչներին պետք է միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը: Դպրոցի պայմաններում ուսուցիչների արդյունավետ համագործակցությունը սահմանվում է որպես տարբեր գործունեության տեսակներում ներգրավվածություն, երբ ուսուցիչները հաղորդակցվում են դասարանային աշխատանքների և գործուղությունների շրջանակում ՝ փորձելով կատարելագործել մանկավարժական փորձը և խրախուսել գործընկերներին՝ ստեղծելու նոր բաներ: Դպրոցական համայնքի անդամները կիսում են այն համոզմունքը, որ համատեղ աշխատանքը և թիմեր կազմելուն տրամադրված ժամանակը՝ միասին աշխատելու համար, լավագույն միջոցն է դպրոցի ընդհանուր նպատակներին հասնելու համար:

Համագործակցության հանդեպ ամուր նվիրվածություն ցուցաբերելով ՝ ուսուցիչներին ավելի հասանելի են դառնում ուսումնական ռեսուրսները, և նրանց դասավանդման մեթոդները կատարելագործվում են, քանի որ համագործակցությունն առաջարկում է աջակցություն՝ նոր գաղափարներ և գործողություններ փորձելու համար: Այս գործընթացը նաև հնարավորություն է տալիս դպրոցին շարունակաբար անդրադառնալ և կատարելագործել աշխատանքը և բարձր չափանիշներ ստեղծել բոլոր աշակերտների համար: Ուսուցիչների փոխշփումներն իրենց գործընկերների հետ կարող են մեծ փոփոխություն բերել ուսումնառության մակարդակը բարձրացնելու և դասերին նախապատրաստվելու սթրեսը նվազեցնելու հարցում:Ուսուցիչները համագործակցում են ուսումնառության շարունակականությունն ապահովելու նպատակով , ինչը վճռորոշ նշանակություն ունի սովորողների արդյունքների համար: Ուսուցիչների միջև համագործակցությունը կարող է նպաստել կրթության որակի բարելավմանը, մանկավարժական մասնագիտական ներուժի կարիքների բավարարմանը,

մասնագիտական գիտելիքների և առաջավոր մանկավարժական փորձի մշակմանն ու տարածմանը: Կրթական տարբեր մակարդակներում դասավանդող մասնագետների համատեղ և փոխկապակցված աշխատանքի արդյունքում ձևավորվում են մասնագիտական հանրություններ: Վերջիններս կարող են նպաստել ուսուցիչների փորձի համալրմանն ու աշակերտների վերջնարդյունքների բարելավմանը: Նմանատիպ մասնագիտական հանրությունների ձևավորումն ու զարգացումը փաստում են, որ հնարավոր է մասնագիտական զարգացում ապահովել համապատասխան մշակույթի և կրթական միջավայրի առկայության դեպքում: Մասնագիտական հանրությունները խթանում են մասնագետների փորձի փոխանակումը՝ ստեղծելով այնպիսի միջավայր, որն աջակցում է նորարարությունների իրականացմանը: Բացի այդ, դրանք ունեն հստակ և համընդհանուր պատկերացում արդյունավետ ուսումնառության ու դասավանդման վերաբերյալ, որը նպաստում է աշակերտների ընդհանուր զարգացմանը:

Արդյունավետ մասնագիտական զարգացում տեղի է ունենում կրթական այնպիսի միջավայրում, որը խրախուսում և աջակցում է ուսուցիչների շարունակական զարգացմանը: Այսինքն, եթե դպրոցում առկա է համագործակցության մթնոլորտ, ապա արդյունքը կլինի փորձի և նոր գաղափարների փոխանակումը, ինչպես նաև դասարանային խնդիրների արդյունավետ լուծումը: Փորձառու ուսուցիչ լինելու կարևոր նախապայմաններից են համագործակցության բարձր մակարդակն ու հետազոտությունների արդյունքների վրա հիմնված մասնագիտական զարգացումը:

Փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության բարձրացման նպատակով, հատկապես հումանիտար առարկաներ դասավանդող իմ գործընկերների հետ, որոշեցինք «Տարբերակված ուսուցում» մեթոդով երկու փորձարարական դաս անցկացնել: Այս մեթոդի ընտրության նպատակն էր դասարանում առկա ցածր առաջադիմություն ունեցող և պասիվ սովորողներին դասապրոցեսի մեջ ներգրավելու ցանկությունը:

Տարբերակված ուսուցման նպատակը.

· Տարբերակված ուսուցման նպատակն է ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար:

· Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները:
· Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, որոնք ունեն նման անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով:
Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին:
Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են:

Տարբերակված ուսուցումն իրականացվում է *3* հիմնական փուլերով.

1. ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները,
2. խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների
3. տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Դրական կողմերը

Հագեցած դասերը, ծանր ուսումնական նյութերը խթանում են շնորհաշատ աշակերտներին, իսկ այն աշակերտները, որոնք ունեն դանդաղ զարգացման տեմպ. այս պարագայում սովորելու ցանկությունը կորցնում են, և ուսումնառությունը դառնում է ծանր պարտականություն: Ուստի անհրաժեշտ է ստեղծել երեխայի զարգացման համար այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն կդրսևորի իր կարողությունների բոլոր կողմերով և 11-րդ դասարանում, երբ հստակ երևում է սովորողների ընդունակությունները, կարելի է կիրառել

տարբերակված ուսուցում՝ տարբեր մակարդակներով: Հաշվի առնելով կրթական կարիքները՝ տարբերակված ուսուցում իրականացնում են նաև կազմակերպչական ռազմավարությունից ելնելով՝ միևնույն ունակությունների տեր աշակերտներին նույն հոսքում ուսուցանելով:
Այս հայեցակարգից ելնելով՝ շատ մանկավարժներ սովորողների մտավոր ունակությունները բացահայտելու համար դիմում են թեստերի օգնությանը:

Բացասական կողմերը

Աշակերտների տարբերակումը ուժեղ, միջին և թույլ առաջադիությունների ունի ոչ միայն առավելություններ,այլ նաև թերություններ: Տարբերակված ուսուցման ժամանակ, երբ ուսուցիչը ուշադրության կենտրոնում է պահում միջին առաջադիմության տեր աշակերտներին՝ ուժեղների նկատմամբ կիրառելով տարբերակված ուսուցում, անհաղթահարելի խնդիր է առաջանում թույլերի նկատմամբ:

3. Փորձարարական հետազոտություն

***3.1*-Խմբի նկարագիրը**

Ես իմ հետազոտական աշխատանքն անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի կրթահամալիրի 11-րդ դասարանում:

Քանի որ այս դասարանի որոշ աշակերտներ ունեին ցածր առաջադիմություն և պաիվ դրսևորում դասապրոցեսների ընթացքում, այդ պատճառով ես որոշեցի կիրառել «Տարբերակված ուսուցման» մեթոդը, որպեսզի մեծանա աշակերտների հետաքրքրությունն ու մոտիվացիան դասապրոցեսներին մասնակցելու՝ այսինքն կարծիքներ հայտնելու, համեմատելու, վերլուծելու, իրենց մտքերն ազատ ու հստակ արտահայտելու, ինքնուրույնություն ձեռք բերելու վերաբերյալ:

Այս դասարանում սովորում են 15 աշակերտ՝ 7 աղջիկ և 8 տղա, որոնք ունեն տարբեր ընդունակություններ:
Հայոց պատմություն առարկան անցնում են շաբաթական 2 ժամ, այն դասացուցակում տեղադրված է 4-րդ կամ 5-րդ ժամերին:

3.2-Փորձարարական դասեր

3.2.1-Փորձարարական դաս-*1*

Այսօրվա դասի՝ թեման է «Իրադրությունը Հայաստանում և Այսրկովկասում 1918 հունվար-ապրիլ» (տե՛ս դասապլան 1, էջ՝ 12):

Դասը սկսվեց, նախորդ թեմայի համառոտ քննարկմամբ և ամփոփմամբ, թեմայի վերաբերյալ հարցերով ու պատասխաններով, քննարկեցինք և պարզաբանեցինք թեմայի՝ սովորողների համար անհասկանալի հատվածները:

Քանի որ ընտրված է «Տարբերակված ուսուցման» մեթոդը, աշակերտներին բաժանեցի երեք խմբի՝ բարձր առաջադիմություն ունեցողները պատմեցին և վերլուծեցին թեման, շեշտելով նախորդ շրջանի իրադարձությունների հետ պատճառահետևանքնային կապը:

Միջին առաջադիմություն ունեցող սովորողներին հանձնարարեցի թեստային աշխատանք՝ երկու տարբերակով, իսկ առավել թույլ առաջադիմություն ունեցող աշակերտները կատարեցին առաջադրանքներ, թեայի վերջում զետեզված «հարցեր և առաջադրանքներ» բաժնից: Առաջադրանքների բնույթը սովորողներին ծանոթ էր, քանի որ մինչ այդ դասարանում տարբեր առաջադիմության տեր աշակերտները կատարել էին նման աշխատանքներ: Առաջադրանքները սովորողների կողմից կատարելուց հետո, հաղորդվեց հաջորդ դասը.«1918թ. Մայիսյան հերոսամարտերը» :

3.2.2-Փորձարարական դաս-*2*

Դասը սկսեցի հարց ու պատասխանով՝ անցած թեմայի վերհիշմամբ: Աշակերտները բավականին ակտիվ մասնակցեցին և պատասխանեցին անցած նյութը, որը բավականին տպավորվել էր նրանց մեջ: Թույլ առաջադիմություն ունեցող աշակերտները, ներկայացրեցին դասի՝ իրենց հանձնարարված հատվածի վերաբերյալ կատարած առաջադրանքները, որոնք քննարկվեցին, և առակա որոշ սխալները շտկվեցին հենց աշակերտների կողմից՝ քննարկման արդյունքում:

«Մտագրոհի» մեթոդով ստուգեցի դասարանի գիտելիքները նախորդ թեմայի վերաբերյալ: Այնուհետև օգտագործելով «Տարբերակված ուսուցում» մեթոդը աշակերտների յուրքանչյուր խմբի հետ, սկսեցի աշխատել իրենց համար ընտրված տարբերակված ուսուցման մեթոդով:

Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, քննադատական մոտեցմամբ վերլուծեցին և մեկնաբանեցին մինչ մայիսյան հերոսամարտերն ընկած իրադար-ձությունները, և կարևոր իրադարձություններն ու տարեթվերը գրեցին գրատախտակին՝ թույլ և միջին առաջադիմություն ունեցող աշակերտների համար: Այնուհետև գրատախտակը բաժանվեց երեք մասի և յուրքանչյուր խումբ դասի իրեն հանձրարաված հատվածից գրեց թեման բնորոշող նախադասություններ:

Քանի որ գլխավոր թեման եզրափակվում էր, հանձնարարվեց ամփոփում: 4 աշակերտներ ստացան միավորային գնահատական:

4. Եզրակացություն

Աշակերտների մոտիվացիան բարձրացնելու համար անցկացրեցի երկու փորձարարական հետազոտական դասեր՝ «Տարբերակված ուսուցման» մեթոդով, որտեղ պասիվ աշակերտներն իրենց դրսևորեցին բավականին ակտիվ, իսկ թույլ և միջին առաջադիմություն ունեցողները համեմատաբար ավելի հաջող, ամբողջ դասարանը ներգրավվեց դասապրոցեսի լիարժեք կայացմանը, հաղորդվեցին գիտելիքներ, կարծիքներ: Աշակերտները խոստովանեցին, որ իրենց շատ դուր եկավ այս մեթոդը: Նրանք մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրեցին տրված թեման, դիտարկեցին այլ երկրների պատմության հետ նմանություններն ու տարբերությունները, ծանոթացան ժամանակի հայտնի հայ և օտարազգի զորավարներին, արժևորեցին մայիսյան հերոսամարտերի նշանակությունը հայ ժողովրդի համար: Փորձի փոխանակման և համագործակցության շրջանակներում փորձարարական դասին մասնակցող ուսուցիչները արժևորեցին «Տարբերակված ուսուցման» մեթոդը՝ զգալի թվով թույլ և միջին առաջադիմություն ունեցող դասարաններում,ևգոհ էին գրանցված արդյունքից:

Այսպիսով, ես եկա այն եզրակացության, որ ««Տարբերակված ուսուցման»» մեթոդն օգնեց աշակերտների մոտիվացիայի բարձրացմանը, պասիվ աշակերտների ներգրավածությանն ու ակտիվացմանը, նպաստեց նրանց հետաքրքրությունների մեծացմանն ու գիտելիքների ավելացմանը:

Միաժամանակ համոզվեցի, որ այս մեթոդը ուսուցիչների համար ևս օգտակար է մասնագիտական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից:

5. Օգտագործած գրականության ցանկ

1.Մանասյան Ն., «Հանրակրթության արժեքային համակարգը» Մանկավարժություն,N1-2,7-14 էջ, 2004թ.:

2.Նազարյան Ա., «Մշակույթը և ազգային արժեքների ստեղծումը, պահպանումն ու ժառանգականության ապահովումը», Հայագիտությունը դպրոցում, N3-4, 6-11 էջ, 2007թ.:

3. Հանրակրթական «Հայոց պատմություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ,
https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf

6. Հավելված

Դասապլան-1

Առարկա	Հայոց պատմություն	Ամսաթիվ	16.05.2022	Կիսամյակ	II	Դասարան	XI
Թեմա	«Իրադրությունը Հայաստանում և Այսրկովկասում 1918 հունվար-ապրիլ» Կատարել թեստային և գործնական աշխատանք Ուսուցանել «1918թ. Մայիսյան հերոսամարտերը» թեման						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, գրատախտակ, տետր, համակարգիչ						
Դասի նպատակը	Ծանոթանալ Հայաստանի նորագույն պատմության մի կարևոր շրջանի հետ Ծանոթանալ Հայաստանի առաջին Հանրապետության հռչակմանը նախորդած իրադարձություններին և հանրապետության հռչակման նախադրյալներին Ձևավորել հմտություններ հայոց պատմությունից անհրաժեշտ հատվածներ վերլուծելու, մեկնաբանելու Արժևորել հայոց նորագույն շրջանի պատմությունը						

Վերջնար-դյունքները	Տիրապետի հայոց նորագույն պատմությանը Կարողանա ինքնուրույն վերլուծել ու մեկնաբանել իրադարձությունները Համեմատի հակադիր կամ նույնանման իրադարձությունները Ձևավորի քննադատական մտածողություն Դրսևորի հետաքրքրություն հայոց պատմության նկատմամբ Արժևորի հայոց պատմությունը

Գործողություններ ժամ/տևող-ություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող Մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով, աշա-ներտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել Հարցադրումներ	Ո՞րն էր նախորդ դասի թեման	

15ր	Աշակերտները «Տարբերակված ուսուցում» մեթոդով սկսեցին պատասխանել օրվա դասը Վերլուծեցին, բնութա-գրեցին,համեմատեցին, կարծիքներ հայտնեցին:	Հարցադրումներով պասիվ աշակերտներին ևս ներգրավվել ընդգրկել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցեր	Բոլշևիկյան հեղաշրջումը և Հայաստանը Ի՞նչ հետևանքներ ունեցավ Հայաստանի համար բոլշևիկյան հեղաշրջումը Ո՞վ էր բոլշևիկյան հեղաշրջման առաջնորդը	Հարցադրումների մեթոդ
5ր	Ամփոփեցին և վերլուծեցին թեման: Կարևոր իրադարձություններն ու տարեթվերը գրեցին գրատախտակին	Կատարել ճշտումներ և շտկումներ Ուղղորդել	Ովքե՞ր էին կազմել «Թուրքահայաստանի մասին հրովարտակը» Ի՞նչ հետևանքներ ունեցավ Հայաստանի համար Բրեստ-Լիտովսկի հաշտության պայամանագիրը	
10ր	Դասը բանավոր պատասխանեցին և պատճառահետևանքային կապը՝ նախորդ շրջանի հետ մատնանշեցին	Հետևել աշակերտների, ուղղություն ցույց տալ, պատասխանել հետաքրքրող հարցերին	Ի՞նչ հետևություններ կատարեցիր թեմայից	«Տարբերակված» ուսուցման» մեթոդ

10ր	Ընթերցեցին նոր դասի տեքստը	Նոր թեմայի հաղորդում Հանձարարություն ներ տալ Պատասխանել աշակերտների հարցերին	Ձեզ դուր եկա՞վ արդյոք «Տարբերակված ուսուցման» մեթոդը	

Դասապլան-2

Առարկա	Հայոց պատմություն	Ամսաթիվ	20.051.2022	Կիսամյակ	II	Դասարան	XI
Թեմա	«1918թ. Մայիսյան հերոսամարտերը » Կատարել թեստային և գործնական աշխատանք Պատասխանել դասը բանավոր Ուսուցանել – Հանձնարարել բաժնի ամփոփում						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, գրատախտակ, տետր, համակարգիչ						
Դասի նպատակը	Ծանոթանալ մայիսյան հերոսամարտերի պատմությանը Իմանալ հերոսամարտերը ղեկավարող զորահարամանատարներին Իմանալ ճակատամարտերի ուղղությունները						
Վերջնարդյունքները	Գիտակցել մայիսյան հերոսամարտերի նշանակությունը հայ ժողովրդի համար Իմանալ հերոսամարտերին մասնակից այլազգի հրամանատարների մասին Արժևորել հայոց նորագույն պատմության այդ շրջանը Ցուցաբերել հետաքրքրություն հայոց նորագույն պատմության նկատմամբ						

Գործողութ- յուններ/ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով Աշակերտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել դասարանին Հարցադրումներ	Ո՞րն էր անցած դասի թեման Իրադրությունը Հայաստանում և Այսրկովկասում 1918 հունվար-ապրիլ	Հարցադրումների մեթոդ
15ր	Օգտագործելով «Տարբերակված» մեթոդը աշակերտներն սկսեցին ակտիվ կատարել թեսատային աշխատանքը,դասագրքի վարժությունները և բանավոր պատասխանել դասը Համեմատականներ անցկանցնել անցածի և նորի միջև, բնութագրեցին կերպարները , կարծիքներ հայտնեցին	Խրախուսել և գովեստի խոսքերով բարձրացնել աշակերտների մոտիվացիան, հետաքրքրու-թյունն ու շահագրգռվածութ-յունը Աշակերտներին ներգրավվել դասապրոցեսին	Ի՞նչ իրավիճակ էր Հայաստանում 1918թ-ի սկզբներին	Մտագրոհ «Տարբերակվա ուսուցման» մեթոդ

	Ծանոթացան Ժամանակի հայտնի քաղաքական դեմքերի հետ	Տալ ուղղորդող հարցեր	Ձեզ 1918թ-ի հունվար-ապրիլ ամիսներին Այսրկովկասում կամ Հայաստանում, հատկապես ո՞ր իրավիճակը հետաքրքրեց	
15ր	Քննարկեցին, համեմատեցին հայ և վրացի գործիչներին Բացեցին գրքեր Կարդացին նոր նյութի համապա-տասխան տեքստը	Հետևել դասին Հետևել աշակերտներին Կատարել ճշտումներ և շտկումներ	Ո՞րն էր Այսրկովկասում Ռուսաստանի ժամանակավոր կառավարության կողմից ստեղծված կառավարական մարմինը Գնահատու՞մ ես ՀՅԴ- բոլշևիկ համագործակցությունը	Բանավոր կրկնության մեթոդ
10ր	Ամփոփեցին 1918թ հունվար-ապրիլ իրադարձությունները Մի քանի աշակերտներ քննարկեցին դրանց ազդեցությունը մայիսյան հերոսամարտերի վրա Պատասխանեցին գրքում գրված	Կատարել ճշտումներ և շտկումներ Հարցադրումնե ր	Ձեզ ի՞նչը դուր եկա՞վ այդ համագործակցությանը մեջ, ինչու՞ Սիրու՞մ եք Հայոց պատմություն	Հարց ու պատասխան մեթոդ

	հարցերին(հարցեր և առաջադրանքներ բաժնից) Վերջում ամփոփեցին ընդհանուր բաժինը			